

**ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ
ԻՐԱՎԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ V-XIV ԴԴ.**

Միջնադարյան Հայաստանում վերահսկողության գործառույթներ էին իրականացնում պետական կառավարման բարձրագույն մարմինները՝ «գործակալությունները», իսկ հոգևոր ոլորտներում՝ Հայոց առաքելական եկեղեցու կառույցները՝ կաթողիկոսի գլխավորությամբ:

«Գործակալությունների» գլուխ էին կանգնած «իշխանք», «գաւառապետք», «պետք և բռնաւորք», «հազարաւորք», «կուսակալք», «աւագ նախարարք»¹: Վերահսկողական ծառայություններ կատարողներ էին «նախարարք մեծամեծք», «աւագք», «կուսակալք», «դատաւորք», «պետք», «իշխանք»²:

Արշակունիների Հայոց թագավորության մեջ արքունիքում բարձր պաշտոններ՝ «գործեր» ստացած նախարարներն իրենցից կախման մեջ գտնվող պաշտոնյաների («գործակալք») միջոցով վերահսկում էին երկրում տեղի ունեցող պետաիրավական և ֆինանսատնտեսական գործընթացները:

Հայաստանում գերազդեցիկ գործառնությամբ օժտված «հազարապետություն» գործակալությունն Ամատունի կամ Գնունի նախարարական տոհմերի գլխավորությամբ իրականացնում էր երկրի տնտեսական բարեկարգման, ֆինանսների, շինարարական աշխատանքների, պետական պարիակների և

¹ Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 428:

² Տե՛ս Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 46:

հարկահանության նկատմամբ պետական վերահսկողությունը: Եղիշե պատմագրի հավաստմամբ «հազարապետն էր աշխարհին, իբրև գիայր վերակացու»³:

Հազարապետն իր տրամադրության տակ ուներ հարկահանությանն առնչվող գործառնությունները վերահսկող հատուկ պաշտոնյաներ («գործակալք»), որոնք հետևում էին, որպեսզի գյուղահամայնքների գլուխ կանգնած տանուտերերը ժամանակին ու անթերի կատարեին գյուղացիներից պետական հարկերի գանձումը: Հազարապետին էին ենթարկվում նաև քաղաքների թագավորական տնտեսները՝ «շահապաները», որոնք վերահսկում էին քաղաքաբնակներից պետական հարկերը գանձելու գործառնությունները:

Հազարապետությունը վերահսկում էր նաև հասարակական աշխատանքների (պետական պարիսկների) կատարման ընթացքը: Հազարապետի ստորակա պաշտոնյան՝ «գարիկպետը» հավաքագրում ու կազմակերպում էր աշխատողներին և իրականացնում համերկային և պետական կարևորություն ունեցող աշխատանքները՝ քաղաքների ամրություններն ու կամուրջների կառուցումը, ջրանցքների անցկացումը, ճանապարհաշինությունը, անտառատնկումները⁴:

Հայաստանում վերահսկողական գործառնությամբ էր օժտված նաև «մարդպետություն» գործակալությունը, որը վերահսկում էր Արշակունիների արքունիքի, թագավորական ամրությունների, բերդերի պահպանությունը, արքունի գանձերին, կալվածներին առնչվող գործերը: Հայր մարդպետը վերահիշակում էր թագավորական տան սեպուհների (արքայազների)

³ Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխատասիրությամբ Ե. Տեր-Մինասեան, Երևան, 1957, էջ 23:

⁴ Տե՛ս Մանանդյան Հ., Երկեր, հ. Դ, Երևան, 1981, էջ 241–244:

դաստիարակության գործը: Մարդպետներն իրենց տրամադրության տակ ունեին հատուկ («սեպուհական» կամ «մարդպետական») գորաբաժին և մեծ ազդեցություն ունեին արքունիքում: Նրանց վերահսկողական իրավագործությունը զգալի էր նաև այլ բնագավառներում (Հայոց թագավորի կանանոցի, հանդերձարանի հսկողությունը):

Համերկրային վերահսկողական գործառնություն էր իրականացնում Հայոց եկեղեցին: Յուրաքանչյուր եկեղեցաթեմում վերահսկողական ծառայությունը զլխավորում էր թեմակալ եպիսկոպոսը: Վերջինիս ենթարկվող քորեպիսկոպոսներն իրականացնում էին վերահսկողությունը տեղերում: Փափստոս Բուզանդը հիշում է Դանիել քորեպիսկոպոսին, որը տեսչական այցելություն էր կատարում իր իրավասությանը ենթակա եկեղյաց գավառում⁵: «Քորեպիսկոպոսդ տեսուչ գաւառի ասի», կարդում ենք Հայոց Կանոնագրքում⁶: Քորեպիսկոպոսները հսկում էին հոգևոր-եկեղեցական գործառնույթները պլուղերում⁷: Սահակ Պարթևի կանոնների Դ հոդվածով «տեսուչ քորեպիսկոպոսն պարտի համառատել զամենայն եկեղեցիս»⁸: Քորեպիսկոպոսները պարտավոր էին նաև հսկել իրենց ենթակա կրոնի սպասավորների վարքուբարքը և ժամերգություններն ու պատարագներն ըստ պատշաճի կատարելու գործընթացները: Թ կանոնով սահմանվում էր, որ «...տեսուչ քորեպիսկոպոսն, զլաւս եւ զաջողակս պատուոյ եւ մեծարանաց առնել արժա-

⁵ Տե՛ս Փափստոս Բուզանդ, էջ 31:

⁶ Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 163:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 212:

⁸ Նույն տեղում, էջ 369:

նի»⁹: Եպիսկոպոսը, համաձայն Թադեոս առաքյալի Բ կանոնի, պետք է նշանակեր զավառների ու քաղաքների տեսուչներ¹⁰:

Եկեղեցական տեսուչ հսկողները գործ ունեին հավատացյալների հոգիների մեղսագերծմանն առնչվող խնդիրների հետ: Նրանց հսկողության տակ էին նաև դպրոցները, ուսումնագիտական հաստատությունները: Սահակ Պարթևի Ժ կանոնով քրեռեպիսկոպոս-տեսուչները պարտավոր էին վերահսկել դպրոցներում ընթացող ուսումնական գործընթացները, բացահայտել օրինախախտումները: Թադեոս առաքյալի Ա կանոնը պահանջում է, որպեսզի վերահսկողությունն իրականացնող եպիսկոպոսները լինեն անբիծ վարքի տեր, ուսուցանող, անարծաթասեր, հրաժարվեն կաշառքից¹¹: Հովհան Մանդակունի կաթողիկոսից (V դար) մեզ հասած կանոնում ասվում է, որ «տեսուչ ժողովրդեանն» պարտավոր է «ողջ պահել զժողովուրդն և ապրեցուցանել զնոսա»¹²: Իսկ Թադեոս առաքյալի Բ կանոնը պատվիրում էր, որպեսզի վերահսկողություն իրականացնելիս չցուցաբերվի խտրական վերաբերմունք, կրկնակի ստուգել, քննել օրինազանցների արարքները՝ նախ առանձին, ապա երկու կամ երեք վկաների, վարդապետների մասնակցությամբ¹³:

Ըստ Մովսես Խորենացու՝ Հայոց կաթողիկոսը պարտավոր էր «կալ ի վերայ բաշխից հարկաց խնդրեցելոց և դատաստանաց և այլ աշխարհական կարգաց»¹⁴: Կաթողիկոսը հսկում

⁹ Նույն տեղում, էջ 372:

¹⁰ Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Ե., 1971, էջ 23:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 20:

¹² Նույն տեղում, էջ 241:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 23:

¹⁴ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 350:

էր դատական գործառնություններում օրենքների խստիվ կատարումը, քանի որ օրենքները սահմանվում էին եկեղեցու կողմից՝ ազգային-եկեղեցական ժողովներում: Այդ ժողովներին միշտ մասնակցում էին նախարարները, անշուշտ, իրենց նպաստը բերելով կանոնական որոշումների ընդունմանը, քանի որ աշխարհական գործերը վերահսկվում, հանցապարտների նկատմամբ պատիժներ և տուգանքներ էին սահմանվում ու գործադրվում աշխարհիկ դատարանների կողմից:

Վերահսկողական բացառիկ իրավագործությամբ էր օժտված «թագադիր և թագակապ ասպետության» գործակալությունը, որը Բագրատունի նախարարական տոհմի ժառանգական մենաշնորհն էր: Թագադիր ասպետը թագ էր դնում Արշակունի Հայոց թագավորի գլխին, նաև հսկում պալատական շքակարգի ու վարվելակերպի բնագավառում սահմանված կանոնակարգի պահպանումը:

Վերահսկողական ծառայությունների առջև ծառացած խնդիրները քննարկվում և որոշումներ ընդունվում էին ազգային-եկեղեցական ժողովներում: Կաթողիկոսն էր Հայոց եկեղեցու գերագույն դատավորը, վերջնական վճիռ կայացնողը: Նրա կայացրած վճիռը բողոքարկման ենթակա չէր: Նա կարող էր բանադրել թագավորին, նախարարներին:

Քրիստոնեությունը 301 թ. պետական կրոն հռչակելուց հետո Հայաստանում Հայոց եկեղեցին սահմանեց սեփական կանոնախմբեր, որոնք հաստատվում էին ազգային-եկեղեցական ժողովներում: Դրանցից առաջինը գումարվեց Տարոնի Աշտիշատ ավանում 354 թ.: Ժողովի սահմանած կանոնների գործադրմանը հսկելու էր եկեղեցին, որը հեթանոսաբարո սովորությունները վերացնելու համար խիստ հսկողություն սահմանեց: Ժողովի որոշումների կատարման վերահսկողությունն իրականացվում էր Ներսես Կաթողիկոսի բարձր հովանավորությամբ:

Նա, ինչպես հավաստում է պատմագիրը, աշխարհի վերակացությունը կատարում էր իր ամբողջ կյանքի ընթացքում¹⁵: Բարեգործական հաստատությունների վրա անմիջական վերահսկողությունն իրականացնում էին Խաղ եպիսկոպոսը և ուրիշներ¹⁶:

447 թ. Շահապիվանում կայացած երկրորդ ազգային եկեղեցական ժողովն իր սահմանած կանոններով ոչ միայն վավերացրեց Աշտիշատի ժողովի որոշումները, այլև հաստատեց Նիկիայի 325 թ., Կ. Պոլսի 381 թ., Եփեսոսի 431 թ. տիեզերական ժողովներում ընդունված կանոնական որոշումները, ինչպես նաև Գրիգոր Լուսավորչի, Ներսես Մեծի, Սահակ Պարթևի ու Մաշտոցի, ապա նաև օտար՝ առաքելական կանոնները: Ժողովում օտարամոյծ կանոնները երանգավորվեցին ազգային գույներով:

Ժողովի կանոններն ընդունվեցին հոգևոր և աշխարհիկ տերերի միակամ որոշմամբ: Ընդունված կանոնները խիստ պատիժներ էին սահմանում նաև եկեղեցականների կանոնազանցումների համար: Ժողովի ընդունած առաջին հոդվածով, եթե եպիսկոպոսը բռնվեր բարոյազանց արարքներում, զրկվելու էր աթոռից ու իշխանությունից և 1200 դրամ տուգանք էր վճարելու՝ կարոտյալներին բաշխելու համար¹⁷: Պատիժ և տուգանք էր նախատեսվում նաև հանցապարտ քահանաների ու սարկավագների համար: Դրանց գործադրմանը հետևում էր եկեղեցին՝ իրականացնելով իրավական վերահսկողություն: Ելնելով երկրում ստեղծված վիճակից՝ Շահապիվանի ժողովում Եկեղեցին սահմանեց դաժան պատիժ՝ հավատուրացնե-

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 67:

¹⁶ Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 279–280:

¹⁷ Տե՛ս, նույն տեղում, էջ 429:

րի, կախարդների և այլ կարգի չարագործների քարկոծում (Ը կանոն):

Վասակ Սյունին գլխավորում էր հարկային գերատեսչությունը և վերջինիս գործակալներին¹⁸: Նրանք առաջնորդվում էին նաև եկեղեցու սահմանած օրինադրույթներով ու կանոններով, որոնք պատիժներ կամ տուգանքներ էին սահմանում նաև ընտանեկան հարաբերությունները կարգավորելու համար:

Հայաստանում պահպանվում և Սասանյանների կողմից հովանավորվում էին հեթանոսական որոշ սովորույթներ՝ հատկապես ազգականների հետ ամուսնությունը: Շահապիվանի ժողովի ԺԲ կանոնով արգելվում էր այրիացած հարսի ու եղբոր կնոջ հետ ամուսնությունը: Կարգը խախտողները ենթակա էին նզովքի ու ապաշխարանքի, տուգանքի: Մինչև չորս աստիճանը («պորտը») արգելվում էր ազգականների ամուսնությունը¹⁹: Քանի որ նզովքն ու ապաշխարանքն եկեղեցու կողմից էին պարտադրվում, ուստի դրանց իրականացումը վերահսկում էին եկեղեցականները: Տուգանքը վերահսկում էին աշխարհիկ կառույցները: Նույն ժողովի ԺԵ կանոնը պահանջում էր, որպեսզի կրոնավորող միայնակյացներն ու արեղաներն ապրեն սրբակեցությամբ, իսկ ԺԶ կանոնի համաձայն, եթե եպիսկոպոսը, քահանան կամ «ազատ ոք ի դատաւորաց» և շինականը ցանկանում են հոգևոր առաջնորդներ կարգել, պատրաստել եկեղեցու սպասավորներ, նշանակել «ժողովրդապետս եւ արէնսդիրս», պետք է հրաժարվեն կաշառք վերցնելուց և ընտրությունն արդարությամբ կատարեն՝ ի տես և ի խրատ մյուսների: Իսկ այն պաշտոնյան, որը կաշառք էր վերցնում, նզով-

¹⁸ Տե՛ս Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատասիրությամբ՝ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տիփլիս, 1904, էջ 83:

¹⁹ Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 445–446:

վում ու զրկվում էր իշխանությունից: Նույն կանոնով գավառի եպիսկոպոսի վերահսկողության տակ էին նաև գավառի վանքերը, վանաց երեցները և անապատականները²⁰:

Հայոց եկեղեցին նախանձախնդիր էր հայոց դավանական ինքնորոշման պահպանմանը: 506 թ. Բաբկեն Ա Ոթմսեցի կաթողիկոսի նախագահությամբ Դվինում կայացած ժողովում դրվեց հայոց դավանության հիմնաքարը: Այդ որոշումն ուներ նաև ազգապահպան հույժ կարևոր նշանակություն: Այն կենսագործելու համար Եկեղեցին հետևողականորեն գործի էր դնում իր վերահսկողական իրավագործությունը, անշուշտ, թիկունքում ունենալով հայ նախարարներին:

Հայոց կաթողիկոս Ներսես Բ-ի (548–557) օրոք՝ 554 թ. Դվինում կայացած ժողովում ընդունվեցին 37 կանոններ: Առաջին կանոնով պատվիրվում և հսկողություն էր սահմանվում քահանաների կողմից սեղանի հացը և զանազան նվիրատվություններ եկեղեցի ուղարկելու վրա²¹: Երրորդ կանոնում նշվում էր, որ երբ որևէ մեկը չի կարողանում եկեղեցուն տրվող տուրքը վճարել, որոշ քահանաներ թույլ են տալիս այն հետագայում վճարել, սակայն պահանջում են նաև վաշխը (տոկոսը): Հինգերորդ կանոնի համաձայն՝ եկեղեցու տգետ պաշտոնյաները պետք է կարգալույծ արվեին և վերադառնային հայրենի հողին ու ջրին, վճարեին արքունի հարկը և իրենց որդիներին դպրոց ուղարկեին: Հասկանալի է, դրանք իրականացվելու էին եկեղեցու վերահսկողության ներքո: Հոգվածներից մի քանիսում խոսվում է քահանաների զանազան կանոնազանցումների մասին, որոնք ևս ենթակա էին եկեղեցական վերահսկողությանը: ԺԳ կանոնը պահանջում է, որպեսզի բնակչության կող-

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 445–448:

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 478:

մից տրված տուրքը («պտղի») բերվի եկեղեցի, և քահանաներն այն բաժանեն միմյանց միջև, բաժին հանելով նաև այրի կանանց՝ եթե նրանք պարկեշտ են²²։ Լե կանոնով պատիժ էր նախատեսվում վաճառականությամբ ու վաշխառությամբ զբաղվող հոգևորականների նկատմամբ²³։

Այդպիսով, հայոց պետականության բացակայության պայմաններում Եկեղեցին պահպանում էր իր օրինակարգող և վերահսկող գործառնությունը։ Սահմանելով իրավանորմեր ու օրինադրույթներ, Եկեղեցին նաև վերահսկում էր դրանց կատարման ընթացքը։ Նախարարական պետականության գոյության պայմաններում Եկեղեցին նախկինի պես աշխարհական գործերի վերահսկողությունը թողնում էր աշխարհիկ իշխանություններին։ Հայ Եկեղեցին կարգի էր հրավիրում, դատի կանչում բոլոր զանցառուներին և պատվիրում էր պատժել։ Ղատողը Հայոց կաթողիկոսն էր։ Նա էր նաև ընդհանուր վերահսկողական գործառնության կենսագործողը։ Նա էր օրենսդրական մարմնի առաջնորդը, որին վերապահված էր շնորհման, ներման իրավունքը։ Բայց Եկեղեցու օրենսդրական իրավունքը պատկանում էր ազգային-եկեղեցական ժողովին։ Երբ կաթողիկոսը կանոններ էր սահմանում, դրանք հաստատվում էին ժողովում։ Եկեղեցական կանոնները կիրառվում էին քաղաքացիական օրենքներին զուգահեռ։ Երկուսն էլ հաշվի էին առնում քրիստոնեացված սովորության իրավունքը և համազոր իրականացնում վերահսկողական գործառնություններ, քննում օրինանախատումները, որոշում հանցավորության չափը և ներկայացնում համապատասխան մարմիններին։ Աշխարհիկ

²² Տե՛ս նույն տեղում, էջ 483։

²³ Տե՛ս նույն տեղում, էջ 490։

իշխանություններին թույլ չէր տրվում կասեցնել վերահսկող մարմինների որոշումները:

Եկեղեցու և աշխարհիկ մարմինների վերահսկողական գործունեությունը նպաստում էր երկրի ինքնուրույնության ամրակայացմանը, միասնական իրավակեցության պահպանմանը:

Կարևոր որոշումներ ընդունեց Ղվինի 645 թ. ժողովը, որը նգովեց քաղկեդոնականությունը: Ներսես Գ Շինարար կաթողիկոսի նախագահությամբ կայացած այս ժողովում ընդունվեցին 12 կանոններ, որոնք վերահսկողություն էին սահմանում ինչպես հոգևոր դասի գործունեության, այնպես էլ բարոյական մաքրագործման վրա: Առաջին կանոնը պահանջում էր, որ պետքի եկեղեցու առաջնորդները՝ եպիսկոպոսները սրբությամբ ու արդարությամբ կատարեն իրենց պաշտոնը և օրինակ ծառայեն ժողովրդի համար՝ «ամենայն բարեձեւութեամբ»²⁴: Գ կանոնը պահանջում էր, որպետքի եպիսկոպոսը չհափշտակի ուրիշ եպիսկոպոսի թեմը և չվերցնի իրեն չպատկանող հասույթները: Դ կանոնով սահմանվում էր, որ եպիսկոպոսները պարտավոր են իրենց թեմերում վանքերի, դպրոցների նկատմամբ «տեսչություն և հոգաբարձություն», այսինքն՝ վերահսկողություն կատարել ոչ թե բռնությամբ ու ազատությամբ, այլ վայելուչ ձևով: Նրանք պարտավոր էին նաև «տկարանոցս հայել և տեսչաւորել», տուգանել զանցառուներին: Թերացողների հանդեպ վերահսկողություն էր սահմանվում, որի ընթացքում եպիսկոպոսը որպես տվյալ եկեղեցաթեմի (վիճակի) առաջնորդ ու վերահսկող, պետք է խրատեր և զանցառուներին բերեր «ի կարգ յուղղութեան»²⁵: Զ կանոնով եպիսկոպոսն իր վե-

²⁴ Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 202:

²⁵ Նույն տեղում, էջ 204–205:

րահսկողական իրավագործությամբ կարող էր կարգազանցին գրկել քահանայությունից:

Խստիվ վերահսկողություն էր սահմանվում անժառանգ եկեղեցականի ունեցվածքի նկատմամբ: Վերջինս իրավունք չունեի հոգուտ ազգականների կամ որդեգրի իր «հողից ու ջրից» բաժին տալ՝ կտրելով եկեղեցու տիրույթներից: Բայց նա կարող էր իր շարժական գույքը տալ ում որ կամենար, նաև վաճառել, կտակել (Ը կանոն): Թ կանոնով արգելվում էր քահանաների հողաբաժինները գյուղացիների հողերին հավասար կարգով ազգականների կողմից հարկման ենթարկելը: Հաջորդ՝ Ժ կանոնում ասվում է, որ ազատներից ոմանք վանքերի նկատմամբ իշխանություն են գործադրում, նշանակում կամ արձակում են իրենց ցանկացած վանականին: Կանոնը պատվիրում էր վանքերի ու եկեղեցիների «տեսչությունը», իմա՝ վերահսկողությունը վերապահել եպիսկոպոսներին: Ազնվական դասը ևս վերահսկում էր վանքերն ու եկեղեցիները: ԺԱ կանոնում նշվում էր, որ ազնվականներից ոմանք անգամ իշխանություն են իրականացնում հիվանդանոցների նկատմամբ, վերահսկող գործակալներ են նշանակում հիվանդների ուտելիքի, ընպելիքի վրա, նեղում, բռնությամբ հարկ են պահանջում նրանցից²⁶: Հասկանալի է, որ ազատանին ավելի խստաշունչ վերահսկողություն էր գործադրելու աշխարհականների նկատմամբ, օգտվելով նաև պատժելու իր իրավունքից (իրեն ենթակա գավառներում): Ժողովական ազնվականները վերահսկողական գործառնություններ կենսագործելիս պետք է ընդունեին կանոնականացված այդ պահանջները: Փաստորեն Ղվինի 645 թ. ժողովում շոշափվում էին նաև պետական-վերահսկողական և հասարակական սուր հնչելություն ունեցող խնդիրներ, որոնք

²⁶ Տես նույն տեղում, էջ 211:

միտված էին եկեղեցու իշխանության և նախարարական պետականության ամրապնդմանը:

Արաբական խալիֆայության կողմից Հայաստանի վերջնական նվաճումից (701) հետո հայ ազնվականության ու եկեղեցու առջև ծառացավ իսլամի, որպես կրոնական հզոր ուժի և օրինակարգի հորձանքին դիմակայելու, երկրի ինքնավար իրավունքների, քրիստոնեական իրավակարգի ու կենսակերպի պահպանման անհրաժեշտությունը: Իսլամի ազդեցությունը պատնեշող հաստատուն կռվան դարձավ Վովհաննես Օծնեցի կաթողիկոսի (717–728) կողմից Հայոց կանոնագրքի ստեղծումը, որի շնորհիվ վերահսկողական գործառնությունը ավելի հաստատուն հիմքերի վրա դրվեց: 719 թ. Ղվինում հրավիրված ժողովում Օծնեցին շեշտեց, որ երկրում առկա է «անկարգութիւն բազմացեալ», որի պատճառով ժողովուրդը դարձել է «բազմահետք և բազմաշաւիղք»²⁷: Այդ ժողովում հաստատվեցին Օծնեցու հեղինակած 32 կանոնները, որոնք կոչված էին պաշտպանելու Հայոց եկեղեցու դավանաբանական համակարգը «և ոչ խոնարհել յայլ ազգաց քրիստոնէից յաւանդութիւնս»²⁸: Ավելի ամրապնդվեցին եկեղեցու վերահսկողական գործունեության իրավական հիմքերը:

768 թ. Հայոց կաթողիկոս Սիոն Բավոնեցու կողմից Պարտավում գումարված ժողովում ընդունված կանոնական որոշումները նպատակ ունեին կանխել չարաշահումները եկեղեցականների միջավայրում: Գ կանոնով գավառի եպիսկոպոսների վերահսկողական գործառնությունը սահմանափակվում էին: Արգելվում էր հանցապարտներից տուգանք վերցնելը:

²⁷ Յովհաննու Իմաստասիրի Ածնեցոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 4–5:

²⁸ Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 519:

Հոգվածը եպիսկոպոսին պարտավորեցնում էր ստիպել հան-
ցավորին՝ անծամբ տուգանավճարը բաժանել աղքատներին²⁹։
Զ կանոնով խիստ վերահսկողություն էր սահմանվում աղան-
դավորների նկատմամբ՝ կանխելու համար նրանց գաղափար-
ների թափանցումը եկեղեցի։ Է կանոնով վերահսկողություն էր
սահմանվում վանքերի ունեցվածքի նկատմամբ և վանական-
ներին արգելվում էր դրանից որևէ բան իր տուն տանել³⁰։ ԺԱ
կանոնով խստիվ արգելվում էր հեթանոսի հետ ամուսնություն-
նը։ ԺԷ կանոնը վերահսկողական ծառայություններ իրակա-
նացնող եպիսկոպոսներին, ազնվականներին և այլ «գլխավոր-
ների» պատվիրում էր հոգածու լինել, հսկել ավերված շինու-
թյունների նորոգման աշխատանքները և գանձել նշանակված
տուրքերը³¹։

Վերահսկողական ծառայություններ կատարող գյուղի տա-
նուտերին արգելվում էր գյուղացիների կողմից արքունի հար-
կերը չմուծելու համար եկեղեցու դռները փակել տալ և խափա-
նել ժամերգությունը՝ ոստիկանի գործառույթներ իրականաց-
նող «բռնավորի» միջոցով։

Բագրատունյաց թագավորության պետական-վերահսկո-
ղական ծառայությունը ձևավորվեց Աշոտ Ա Բագրատունու
օրոք (885–890)։ Սմբատ Ա-ի օրոք (890–913) Հասան Գնթունին
բարձրագույն վերահսկողական գործառնություն էր կազմա-
կերպում թագավորությունում։ Նա հիշվում է որպես Բագրա-
տունյաց թագավորության «իշխան և հրամանատար»³²։
Հասանը վերահսկողություն էր իրականացնում երկրի բերդե-

²⁹ Տե՛ս Կանոնագիրը Հայոց, հ. Բ, էջ 7։

³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 8։

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 13։

³² Հովհաննես Ղրապխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 179, 205։

րի, ամրությունների, նաև պետական գանձարանի նկատմամբ: Նա նաև Հայոց թագավորի խորհրդականն էր: Նրան էին ենթարկվում գավառներում վերահսկողական գործառնություն կատարող մանր ազատները, որոնք կոչվում էին «գործակալներ»: Վերահսկողական լայն իրավագործություն ունեին նաև իշխանաց իշխանն ու հազարապետը: Վերջինս հսկում էր հարկերի գանձումը:

Բազրատունյաց թագավորությունում վերահսկողական ծառայություններ էին իրականացնում նաև աշխարհիկ ու եկեղեցական դատարանները («ատեանք»):

Թագավորն ու կաթողիկոսը ենթակա էին ազգային-եկեղեցական ժողովի վերահսկողությանը: Այսպես, երբ 968 թ. Վահան Սյունեցի կաթողիկոսը դրսևորեց քաղկեդոնամետ դիրքորոշում, հայոց եպիսկոպոսներն Աշոտ Գ-ին (953–977) խնդրեցին ժողով իրավիդել՝ քննելու կաթողիկոսի վարքագիծը: Անի մայրաքաղաքում կայացած ժողովում որոշվեց գահընկեց անել կաթողիկոսին, որին հովանավորում էր Վասպուրականի Աբուսահլ-Համազասպ թագավորը: Նորընտիր Ստեփաննոս Գ կաթողիկոսը բանադրեց Վահան Սյունեցուն: Իսկ 1038 թ. Անիում կայացած ժողովում 4000 ժողովականները աթոռից զրկում են Հայոց կաթողիկոս հռչակված Դիոսկորոսին³³:

XII դ. վերջին և XIII-ի սկզբին ձևավորված Ջաքարյանների Հայոց իշխանությունն ուներ վերահսկողական-դատական կառույցներ: Ջաքարյանների վասալ խաղբակյանները (Պռոշյաններ), Վաչուտյանները, Օրբելյանները, Դոփյանները որպես գավառների վերակացուներ, կողմնակալներ, իրենց ստորադրյալ մանր ազնվականների միջոցով իրականացնում էին վե-

³³ Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 77:

րահսկողական գործառնություններ, հսկում հարկերի կանոնավոր գանձումը, հասարակական և պետական կարևորություն ունեցող պարհակների կատարումը: Այդ պաշտոնյաները հիշվում են որպես գործակալ, ձեռնավոր, հեջուբ, ամիրա, դաղմաչի և այլն: Նրանց գլխավորում էր ավագ հեջուբը: 1216 թ. Իվանե Ջաքարյանի օրոք Բուպակը հիշվում է որպես «գործակալ եւ հրամանատար ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոց»: Նա նաև հեջուբների ավագն էր³⁴: Ավագ Ջաքարյանի հեջուբ է հիշվում Գրիգոր իշխանը³⁵ (1230-ական թթ.): Հսկողական գործառնությամբ էին օժտված նաև ձեռնավորները³⁶:

Պետական-վարչական բարձրագույնից հետո գործառնությամբ էին օժտված կողմնակալ-վերակացուները («գործակալք»), որոնք վերահսկողական ծառայություններ էին իրականացնում գավառներում, շրջաններում: Նրանք ունեին ոչ միայն վարչական-դատական, այլև գանձահասութային, հարկային գործառնություններ: Նորավանքի 1289 թ. արձանագրության մեջ Տարսայիճ Օրբեյանը հիշվում է որպես «արքայաշուք կողմնակալ, հզոր և մեծ գործակալ»³⁷:

Ջաքարյանների օրոք պետական-վարչական կարևոր պաշտոն էր «ամիրայությունը»: Այդ պաշտոնը կրողները վերահսկողություն էին կատարում քաղաքներում՝ առևտրականների, արհեստավորների նկատմամբ, վերահսկում, կարգավորում էին հարկադրման, հարկահավաքման գործը, նաև կազ-

³⁴ Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 353:

³⁵ Տե՛ս Դիվան հայ վիմագրության, VI, կազմեցին Ս. Ավագյան և Հռ. Ջանփոլադյան, Երևան, 1977, էջ 70:

³⁶ Տե՛ս Ստեփաննոս Օրբելեան, էջ 357:

³⁷ Դիվան հայ վիմագրության, III, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 236:

մակերպում քաղաքների պաշտպանությունը: Անիի Առաքելոց եկեղեցու 1320 թվակիր արձանագրության մեջ եկեղեցուն արված նվիրատվությունը հաստատվում է «ի յամիրայութեան պարոն Լիպին»³⁸: Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն Տիգրան Հոնենցի կատարած նվիրատվությունները հաստատում են Գրիգոր եպիսկոպոսը և Անիի ամիրա Վահրամը, նաև Երկաթը³⁹: Մաքսակետերում վերահսկողություն էին կատարում դաղմաչիները: 1276 թ. Անի քաղաքի դաղմաչիներ են հիշվում Հնդուչախը, Սուփանը, ապա նաև Մխիթարը, Գեշը: Դաղմաչիները իրենց իրավասության տակ գտնվող շրջաններում նաև կարգավորում էին հարկերը:

XII դ. Հայաստանում ստեղծված անբարենպաստ պայմաններում Հայոց ազգային-եկեղեցական ժողովների սահմանած կանոններին փոխարինեց Ներսես Շնորհալի կաթողիկոսի (1166–1173) «Թուղթ ընդհանրական» վերտառությամբ շրջաբերական նամակը՝ ուղղված հայ ժողովրդի բոլոր խավերին: Այն պարունակում է հեղինակի կանոնական պատվիրանները, որոնք ըստ էության խրատական իրավանորմեր են: Հեղինակը դատապարտում էր այն եպիսկոպոսներին, ովքեր ժողովրդից և եկեղեցուց մաքսավորի պես կորզած հարստությամբ կաշառում են օտար իշխանավորներին⁴⁰: Շնորհալին գտնում էր, որ քահանաներն իրավունք չունեն վարել քաղաքի կամ գյուղի հոգաբարձուի, նաև գավառապետի պաշտոնը, կամ լինել հարկային վերահսկող կամ ստանձնել գործակալական ուրիշ պաշտոն⁴¹: Բայց ստեղծված պայմաններում, երբ Կաթողիկոսական

³⁸ Դիվան հայ վիմագրության, արակ I, Անի քաղաք: Կազմեց Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 27:

³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 17:

⁴⁰ Տե՛ս Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, Երևան, 1995, էջ 115:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, էջ 137:

աթոռը հանգրվանել էր Եփրատի ափին գտնվող Հռոմկլա բերդավանում և փաստորեն կտրված էր հարազատ ժողովրդից: Եկեղեցու վերահսկողական գործառնությունը սահմանափակվում էր սոսկ բարոյական իրավադրույթներով, որոնք պետք է սրբագրեին հասարակական հարաբերությունները, ախտահանելով մեղապարտ հոգիները: Շնորհալի՜ն հայ իշխաններին, որոնք «ի նուազեալ ժամանակիս» տիրում էին «ի տեղիս տեղիս բազմաց կամ սակաւուց, զօրաց և գաւառաց», կոչ է ուղղում անիրավություն չցուցաբերել՝ «դժվարակիր ու ծանր հարկահանությամբ», այլ դրսևորել օրինապատշաճ վերաբերմունք և իրենց ենթակա շրջաններում չկարգել «անիրաւ գործակալս»⁴²:

Այլ էր իրավիճակը Զաքարյանների իշխանության մեջ, որտեղ Եկեղեցին նախկինի պես իրականացնում էր նաև վերահսկողական գործառնություն, իհարկե, աշխարհական իրավախախտումների նկատմամբ հսկողությունը թողնելով պետական կառույցների իրավասությանը: XII դարի Հայաստանի պետաիրավական և հասարակական կյանքն արտացոլված է Դավիթ Ալավկաորդու կանոնական օրինադրությունում⁴³: Այդտեղ պատիժներ (ապաշխարանք, տուգանք) են սահմանվում հոգևորականների թույլ տված կանոնազանցումների համար: Երեխաներին դասավանդող հոգևորականը, եթե դրա դիմաց վարձավճար էր վերցնում, կարգալույծ էր արվելու և նզովվելու: Այդ օրինադրության ԾԳ հոդվածով հետապնդելի ու պատժելի էր համարվում մծղնեական աղանդին հետևելը, նախատեսելով աղվեսադրոշմի խարանում, ապաշխարանք և այլն:

⁴² Նույն տեղում, էջ 142–143:

⁴³ Տե՛ս «Էջմիածին», 1952 թ., սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 48–57, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 56–57, 1953 թ., հունվար, էջ 56–62, փետրվար, էջ 53–60, մարտ, էջ 51–63:

2 հողվածում խիստ վերահսկողություն և պատիժներ էին սահմանվում եկեղեցական գույքը հափշտակողների նկատմամբ:

Մխիթար Գոշի «Ղատաստանագրքում» կանոնակարգվեցին Ձաքարյան Հայաստանի հասարակական-տնտեսական հարաբերությունները, իրավական հիմունքները, ավելի խոր ու բազմակողմանի ուրվագծվեցին դատական-վերահսկողական գործառույթները: «Ղատաստանագրքի» նախադրության մեջ նա նշում է երկրում եղած օրինախախտումները, կաշառակերությունը և հոռի այլ երևույթներ⁴⁴: Մխիթար Գոշի կարծիքով Հայոց պետությունն ու եկեղեցին են այն երկու հիմնասյուները, որոնք պահում են երկրի հասարակական և քաղաքական հիմնաշենքը: Բուն «Ղատաստանագրքի» Բ գլխում նշվում է, որ թագավորը արդարությամբ պետք է վարվի բոլոր գործերում: Թագավորներն ու իշխաններն արդարությամբ պետք է կազմակերպեն հարկահանության գործը: Գոշը գտնում էր, որ կախվածության մեջ եղածներին չպետք է հարկադրել ավելի երկար ժամեր աշխատելու, քան նախատեսվում էր օրենքով: Նա դեմ էր ապօրինություններին ու կամայականություններին: Գյուղացիներն ու արհեստավորները սեփական ունեցվածքը տնօրինելու, առուծախի, աշխատանքային, վարձակալության և այլ բնույթի պայմանագրեր կնքելու բնագավառներում օգտվելու էին քաղաքացիական իրավունքներից: Ղրանք ևս կարգավորվում էին շնորհիվ դատավերահսկողական մարմինների գործունեության: Միս գլխում նշվում էր, որ քաղաքներում առևտուրը («վաճառք») պետք է սահմանվի թագավորի հրամանով, իսկ իշխանների կարգադրությամբ՝ ավաններում, կամ «յայլ ինչ տեղիս ի գաւառս»: Նրանք նաև սահմանում են գնե-

⁴⁴ Տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի, Երևան, 1975, Նախադրություն, գլուխ Բ:

րը, իրենց պաշտոնյաների միջոցով հսկում չափ ու կշռին, մշտապես որոնում, ի հայտ են բերում գեփոդներին, խարդախողներին, դրամանենգներին: Նաև սահմանվում էր, որ առևտրականներից մաքսը պետք է վերցնել «իրաւապէս», արդարությամբ: Հասկանալի է, որ դրանք առանց պատշաճ վերահսկողության, հնարավոր չէր իրագործել: Վերահսկողությունն իրականացվելու էր դատավորների միջոցով՝ «Ճշգրիտ քննութեամբ ըստ հրամանի իշխանաց»: ՃԻՋ հողվածով վարձու աշխատողին ժամանակին չվարձատրողը տուգանվում էր: Իսկ ՋԲ գլխում սահմանվում էր, որ դրամը փոխ վերցնողից տոկոս չպետք է վերցնել, այլ միայն նրան տրված դրամը:

Մխիթար Գոշի Ղատաստանագրքում օրինադրույթներ կան նաև ժառանգական իրավունքի մասին (հողվ. ՃԱ, ՃԲ, ՃԳ, ՃԶ): ՃԱ հողվածը սահմանում է, որ ծնողների ունեցվածքը ժառանգելու է արու զավակը: Իսկ եթե ծնողները զուրկ էին վերջինից՝ չամուսնացած դուստրը: Ամուսնացած դստերը բաժին էր հանվում ժառանգության կեսը՝ առանց ժառանգելու իրավունքի, որպեսզի ժառանգությունը չանցնի այլ տոհմի: Այդ սկզբունքը ենթակա էր խստիվ պահպանման և հետևողական վերահսկման ոչ միայն ազատանու այլև եկեղեցու կողմից, քանի որ շոշափում էր ավատատիրական համակարգի բուն հիմքերը:

1270 թ. Այրարատի Կոտայք գավառի Ձագ գյուղի վանքում կայացած ժողովում ընդունված է (7-րդ) կանոնը քահանաներին արգելում է ձեռնավորի գործառույթներ իրականացնել: Իսկ Ը-Թ կանոնները սահմանում են, որ «քահանայքն դէտք են», որոնք ջանում են «խրատել և զգուշացուցանել»⁴⁵: Ժողո-

⁴⁵ Գարեգին Վարդապետ, Ձագավանից ժողովը, Շողակաթ հայագիտական ժողովածու, գիրք I, Վաղարշապատ, 1913, էջ 44:

վում ընդունված կանոններով քահանաներն ազատ էին համարվում հարկումից, իսկ գյուղացիները պետք է նրանց օգնեին գյուղատնտեսական աշխատանքներ կատարելիս: Արգելվում էր կաշառքով վանահայր, գործավոր կարգելը և այլն: Ժողովի ընդունած «Սահմանքի» նախաբանում նշված է, որ այն հրավիրվել է «կամաւք և հրամանաւ պարոն Խոշաքին և իշխանաց մերոց մեծին Պռաւշայ և Սադունին և Սմբատայ ... յարիի եպիսկոպոսութեան տեառն Գրիգորի»⁴⁶: «Սահմանքի» կանոնական որոշումների իրագործումը հսկվում և կատարվում էր այդ իշխանների, Բջնիի արքեպիսկոպոս Գրիգորի և նրանցից կախյալ պաշտոնյաների (ծեռնավորների) միջոցով:

Կիլիկյան Հայաստանում երկրի գերագույն իրավատերն իշխանաց իշխանն էր, ապա թագավորը, որն ուներ իր վասալները՝ «լիճք-ճորտերը»⁴⁷: Կիլիկյան արքունիքում վերականգնվեցին Հայոց Արշակունիների և Բագրատունիների օրոք հայտնի «գործակալների» պաշտոնները: Թագադիր գործակալը ոչ միայն թագ էր դնում թագավորի գլխին, այլև գլխավորում էր պալատական հանդեսները, հսկում արքունիքի շքակարգը: Վերահսկողական իրավագործությամբ էր օժտված նաև թագավորության խնամակալության («պայլության») գործակալությունը՝ պայլի գլխավորությամբ: Վերահսկողական կարևոր գործակալություն էր նաև սեղանապետությունը՝ սենեշալի (սենեշալի) գլխավորությամբ: Վերջինս իբրև թագավորական պալատի կառավարիչ, հսկում, տնօրինում էր արքունի եկամուտներն ու ծախսերը: Նրան էին ենթարկվում արքունիքում ծառայող գործակալները: Բացառիկ կարևոր վերահսկողական ծա-

⁴⁶ Նույն տեղում, էջ 41:

⁴⁷ Սմբատ Սպարապետ, Ղատաստանագիրք, աշխատասիրությամբ Ա. Գալստյանի, Երևան, 1958, գլուխ ՀԶ (76), էջ 82:

ռայություն էր կատարում մաքսապետության գործակալությունը՝ պռոքսիմոսի գլխավորությամբ: Վերջինս գլխավորում էր պետության ֆինանսները և հարկային գործը: Նա իր ստորադրյալների՝ մաքսատների գործակալների, հարկային պաշտոնյաների և ներքին շուկայի վերակացուների միջոցով հսկողություն էր իրականացնում Կիլիկիայի նավահանգիստներում, լեռնանցքներում ու սահմանագլխին հաստատված մաքսատների («բաժտների») նկատմամբ: Պռոքսիմոսն իր ստորադրյալ պաշտոնյաների միջոցով վերահսկում էր նաև ներքին առևտուրն ու արհեստագործությունը՝ ապահովելով դրանցից զանձվող պետական հարկերի մուծումները: Երկրի նավահանգիստների ընդհանուր հսկողությունն իրականացնում էր պռոքսիմոսից կախման մեջ գտնվող պաշտոնյան՝ «բաժտան կապիտանը»:

Գավառներում, պարոնություններում վերահսկողական ծառայություններ էին կատարում գավառապետներից, իշխաններից կախյալ գործակալները:

Կիլիկյան Հայաստանում վերահսկողական գործառնություններն արտացոլվել են 1243 թ. Սիս մայրաքաղաքում հրավիրված ժողովում: Այդ ազգային-եկեղեցական կաճառը հրավիրեց Կոստանդին Ա կաթողիկոսը՝ Կիլիկիայի Հայոց թագավոր Հեթում Ա-ի (1226-1270) օժանդակությամբ: Ժողովում սահմանվեցին 25 կանոններ, որոնք ամփոփած են նաև Կոստանդին Ա կաթողիկոսի «խրատական թղթում»⁴⁸: Գ կանոնը սահմանում է, որ գավառները վերահսկող եպիսկոպոսները պարտավոր են «մեծաւ հոգաբարձութեամբ, անգայթակղ» կարգել եկեղեցական ուսմունքները դասավանդող ուսուցիչ-

⁴⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, գլուխ ԽԳ, էջ 303-304:

ներ: Ժ կանոնը պահանջում էր, որպեսզի Ս. Գրքի ուսուցիչներն ընտրվեն «բազմաց վկայութեամբ», լինեն գիտուն, վարժ ու տեղյակ, բազմափորձ: ԺԲ կանոնով սահմանվում է, որ վերահսկող եպիսկոպոսը պարտավոր է տարեկան երկու անգամ շրջել իր թեմում, աչքի անցկացնել իր հոտը և նշանակել գիտուն ու ազնիվ քորեպիսկոպոս, որպեսզի նա «երկիւղած և անազահ» իրականացնի վերահսկողական: ԺԵ կանոնը մարմնական ու հոգևոր պատիժներ էր նախատեսում բարոյազանց արարքների համար: ԺԶ կանոնը պահանջում է, որպեսզի «կարող ք և ունևորք» չբռնադատեն տկարներին, աղքատներին: ԺԷ կանոնում նշվում է, որ Հեթում Ա թագավորի, նրա հոր՝ Կոստանդինի և բոլոր իշխանների ներկայությամբ սահմանվում է հսկողություն՝ հավատն անարգողների նկատմամբ կիրառելով խիստ պատիժներ: Ի կանոնով քահանան տարվա մեջ պետք է եկեղեցի կանչեր տղամարդկանց առանձին և կանանց առանձին, նաև կույս աղջիկներին, պատանիներին ու մանուկներին, խրատեր և ծանոթանար նրանց վարքութարքին, մշտապես հսկեր նրանց:

Վարդան Արևելցին այդ կանոնները ներկայացրել է Արևելյան Հայաստանի եպիսկոպոսներին և իշխաններին, որոնք երդմնագրով խոստացել են կատարել Հայոց կաթողիկոսի թղթի կանոնական պահանջները: Նրանց թվում էին Իվանե աթաբեկի որդին՝ «իշխանաց իշխանն Աւագն, և այլ իշխանքն»⁴⁹:

Կիլիկիայի Հայոց թագավորությունում դատավերահսկողական գործառույթներն առավել ամբողջական ներկայացված են Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում», աղբյուր ունենալով հիմնականում Մխիթար Գոշի «Դատաստանագիր-

⁴⁹ Կիրակոս Գանձակեցի, էջ 310:

քը»՝ այն վերամշակելով Կիլիկիայի Հայոց պետության հարաբերությունների ոգով:

Սմբատի «Ղատաստանագրքում» առաջին տեղում դրված են պետական (աշխարհիկ) իրավանորմերը, քանի որ Կիլիկիայում դատաիրավական գործառնությունը լիովին թագավորի և իշխանների իրավասության տակ էր, իսկ եկեղեցին տնօրինում էր լուկ հավատքի, ամուսնա-ընտանեկան, բարոյականության բնագավառները (ԺԷ կանոն): Եկեղեցականի հանցանքը ենթակա էր աշխարհիկ վերահսկողության, քննվում էր աշխարհիկ դատարաններում: Ա հոդվածում նշվում է, որ գավառներում սահմանված հարկերի գանձումը կատարվում է իշխանների վերահսկողությամբ:

Խիստ վերահսկողություն էր սահմանվում ջրօգտագործման վրա: Գ հոդվածում սահմանված է, որ ոչ ոք չի կարող արգելել գետերի ջուրը ոռոգման նպատակով կամ ջրաղացների համար օգտագործելը: Վերահսկողություն էր սահմանվում նաև եկեղեցու հասույթների վրա: ԺԱ հոդվածով դատի էր տրվելու այն հոգևորականը, որը շորթում էր եկեղեցու ունեցվածքը: Ի հոդվածում վերահսկողություն է սահմանվում դասավանդող վարդապետների նկատմամբ, նշվում, որ վերջիններս իրավունք ունեին դասավանդել միայն խորիմացությամբ աչքի ընկնելու դեպքում: ԽԵ հոդվածով արգելվում էր գերեզմանատեղ տալու դիմաց քահանաների կողմից վճար վերցնելը, իսկ ԾԱ հոդվածով՝ առանց եպիսկոպոսի թույլտվության եկեղեցի հիմնելը: ԾԴ հոդվածով արգելվում էր եկեղեցականների կողմից տոկոսով դրամը փոխ տալը: Ջանցառուն ենթակա էր կանոնական պատժի և կարգալույծ էր արվում: ԾԹ հոդվածում ասվում էր, որ եպիսկոպոսը պետք է ամենուրեք աչալուրջ հսկողություն սահմանի եկեղեցու պաշտոնյաների գործողություննե-

րի վրա: ՀԱ հողվածով արգելվում էր ուսուցման դիմաց վարդապետների կողմից վարձավճար վերցնելը:

Կիլիկիայում վերահսկողական-իրավական բնույթի գործառույթները շոշափում էին նաև սեփականությանն առնչվող խնդիրներ (Ա-Դ հողվածներ): Թագավորը «ծառայ»-ից (վասալից) կարող էր հողը խլել միայն դավաճանության դեպքում: Հող կարող էին ձեռք բերել նաև վաճառականներն ու քաղաքի վերնախավը: Խիստ վերահսկողություն էր սահմանվում նաև գրավադրման վրա (ՃԻԵ-ՃԻԷ, ՃԼԱ հողվածներ): Արգելվում էր գրավ դնել գրավատուի համար կենսականորեն կարևոր նշանակություն ունեցող արտադրության գործիքները, բանող անասունները: Գրավ չէր կարելի դնել նաև զենքերը: ՃԻԷ հողվածով թույլ էր տրվում գրավ դնել հողաբաժինը, կալվածքը:

Սմբատի «Ղատաստանագրքի» համաձայն օրենքը պաշտպանում է սեփականատիրոջ իրավունքը՝ պահանջելով վնասի հատուցում, որը պետք է կատարվեր պետության (դատարանի՝ «Ղարպասի» միջոցով, որպեսզի պետությունը շահ ստանար տուգանքներից (հողված ՃԾ-ՃԾԱ, ՃԾԵ, ՃԿԹ, ՃՀԲ-ՃՀԳ, ՃՁԵ, ՃՁԹ, ՃՂԸ, ՄԱ և այլն): Սմբատը միշտ պետական շահն է առաջադասում: Նա պահանջում է ոչ թե փրկագին հոգուտ տուժողի, այլ տուգանք՝ հոգուտ պետության: Մինչդեռ Մխիթար Գոշի մոտ առաջնությունը տուժողի կրած վնասի հատուցումն է:

Հատուկ պաշտոնյաները պարտավոր էին խստորեն հսկել շուկաներում տիրող կարգուկանոնը և պատժել կարգազանցներին: Թերակշռողը պարտավոր էր քառակի չափով հատուցել գնորդին: Դրամանենգը պատժվում էր ձեռքի հատումով: Գնորդին խաբողը միշտ և խստությամբ պատժվում էր: Շուկաներում չափ ու կշիռը սահմանում էին պարոնները (իշխանները) (ՃԽԳ հողված):

Վերահսկողական ծառայությունը միջնադարյան Հայաստանում պետականության կայուն հատկանիշ էր, թագավորության հիմքերն ամրապնդող հույժ կարևոր գործոն: Պետականության անկումից հետո այն պահպանվեց եկեղեցու իրավասության տակ, լոկ շոշափելով ազգային-բարոյական և կրթա-լուսավորական ոլորտները: Օտար բռնատիրությունների պայմաններում եկեղեցին կարողացավ պահպանել կանոնական իրավունքը հոգևոր բնագավառում: Իսկ աշխարհիկ վերահսկողությունն իրականացնում էին այլադավան պաշտոնյաները՝ հենվելով սրի, ուժի և կոպիտ կամայականությունների վրա:

ВРЕЖ ВАРДАНЯН

доктор исторических наук

ОСУЩЕСТВЛЕНИЕ КОНТРОЛЬНЫХ ФУНКЦИЙ В АРМЕНИИ В V–XIV ВЕКАХ

РЕЗЮМЕ

В средневековой Армении контрольные функции осуществляли высшие органы государства, церковные структуры, представители феодального сословия, а также специальные надзиратели – “горцакалы” и “шаһапи”. В I–V веках нахарары армянского царства Аршакидов посредством вассальных азатов (мелких феодалов – “горцакалов”) в своих княжествах контролировали правовые и финансовые операции,

учебные мероприятия и т. д. Контроль регулировался национально-церковными соборами, что нашло отражение в канонических постановлениях соборов 354, 447, 506, 554, 645, 768, 1270 годов. Эти постановления предусматривали строгие меры против языческих пережитков и нарушений христианизированного обычного права.

Институт контрольных функций стал одним из важных факторов государственной жизни Армении, имея регулятивные функции в Багратидском царстве. После падения царства данный институт продолжал контролировать социальные процессы, решая весьма насущные государственные задачи. Армянские князья выступали в роли носителей государственно-контрольных функций в своих владениях. Это отражено в Судебнике знаменитого армянского законоведа XII в. Мхитара Гоша.

В Киликийском армянском государстве (1080–1375) укоренились должности горцакалов-надзирателей, осуществляющих государственно-контрольные функции. Это отражено в постановлениях Сисского собора в 1243 г. и в Судебнике Смбата Спарапета (XIII в.).

VREZH VARDANYAN
Doctor of Historical Sciences

**REALIZATION OF CONTROL FUNCTIONS IN ARMENIA IN
THE 5TH-14TH CENTURIES**

SUMMARY

High organs of the state, church structures, representatives of feudal class, as well as special supervisors realized control functions in medieval Armenia.

In I-V centuries the princes of the Armenian Arshakid kingdom realized control of legal and financial affairs, educational system etc. Control was regulated by the Church Councils.